

ԶԴԵՍ ԵՒ ԶԱՐԴ

Ընդհանրապէս բոլոր փոքր ի շատէ ունեոր կանալք երկու ձեռք չոր են ունենում, մինը սովորական, լրաւոր, միւսը՝ տօնական, զնուաւոր, Աղջիկների, հարամների և նորատի կանանց հանգերձները կարմիր են լինում, իսկ պառաւներինը, մթնագոյն, Աղջիկների հանգերձները բոլորովին նոյն են, միայն որանք պիսի բարդարանք կրելու իրաւունք չունին, այլ միայն մի կարմիր կամ ազիաակ մեղքութու են կապում:

Լիաւուր շորերը բաւական կեղտու և շատ տեղերից կարկատած են լինում, իսկ զնաւուրները բաւական մաքուր և լաւ:

Մի քանի ձեռք զգեստ միաժամանակ ունենալու սովորութիւնը համարեա թէ բոլորովին չկալ: Մինչեւ որ մինը չմաշուի՝ միւսը երբէք չեն կարում: Մինչեւ անզամ շապիկ երկու, կամ առ առաւելը՝ երեք հատ են ունենում, և փոխում են երկու շաբաթը մի անգամ:

Կանանց զգեստները ընդհանրապէս կարում են իրենք կանալք, սակայն ալժմ գիշերում, մանաւանդ Բագուի ազգեցութեան աւելի ենթարկուած տեղերում, լոր են ընկել կանանց զգեստ կարող տղամարդ գերձակներ: Անկայն պէտք է ասել, որ Ախսիանում սրանց թիւը շատ փոքր է, որովհետեւ Բագուի ազգեցութիւնը ալսանդ համեմատաբար թոլլ է, մինչդեռ Գորիսի շրջանում անհամեմատ մեծ է: միմիայն Խնձորեսկ գիւղում, որ 800 տուն բնակիչ ունի՝ կանանց զգեստների 35 գերձակ կալ:

Կ սահեց զգեստը բազկանում է հետեւալ մասներից:—

Շաղիկ:—կարում են առաւելապէս ալըշի և կարմիր մահուդ վարի կառուներից, երբեմն էլ կարմիր մահուդվարուց և կարմիր չթից, նրկար է, և իջնում է մինչեւ ոսները: Կուրծքը ամբողջապէս և առաջի երեսացող մասները կարում են ալըշից կամ կարմիր մահուդ վարուց, իսկ մէջքը և լիտեկի չերենացող մասը կարմիր մահուդվարուց կամ չթից: Կուրծքը բացում է մինչեւ գուկատեղին և կրծքի երկու կողմը, բացուածքի եղրերին կարուած է լինում արծաթի սիրմա

և ապա կը ապիստոն, զգար պալթառ, արծաթէ ոլորած թել, զալթանի վրայ փաթաթած։ Օձիքը 16 սանտիմետր լանութեան է լինում և առաջից ունենում է երկու կոճակի, թենքը կարմիր մահուդվարուց և կամ շթից են լինում, նեղ են և ծալրերին կանաչ զանաւոզ կարած, զառ դալթանով եղբայիրակած և թենքը ասզնէ գործած։ Առվորական շապիկը ալս զարդարանքները չէ ունենում։

Ետքինկիր։ — կարում են կարմիր խամ շիլց, սպիտակ կամ կապուտ խամ կտաւից, Փողերը նեղ են և երկար վերին ծալրը դարձուած, սիսնջանագարձ է կարուած, որի միջով անց է կացրած խոնջ ոնց՝ բամբակեալ կամ բրդեալ մի կապ—որը հանգուատում են մի կողմում։

Աղիազող դ. — հագնում են շապկի վրալ։ Տօնականը դեռահասները կարում են ալըսուց, կարմիր մահուդվարի աստառով, խալ հասակաւորները՝ մարինոսից, բամբաղչա աստառով։ Ասպրականը գիւլի մախմուրից (որի արժ. արժէ 50—75 կ.) կամ կարմիր շիլցից (թօփը արժէ 60 կ.) է լինում։ Միայն մէջքը, որ չէ երեսում՝ կարմիր մահուդվարից է, Մէջքում բիւզմալով սեզմուելով՝ հանում է մինչև ծնկից չորս մատ ցած, Կուրդքը եռանկիւնաձեն բացուած է, Ամբողջ արխալուզի եղյերին կանաչ զանաւոզից մի մատ լայնութեան ք'օտո (Ժապաւէն) է կարած։ Պորտի մօտ մի կոճակ է ամրացրած, որ լինում է մը հատ արծաթեալ 15 կամ 20 կոպէկանոց, ամբողջն կանթածո, ալսինքն ներքին երեսում մի կոնչ լենեմած, խոկ ամէրը (beoutonpièce) զալթանից է շինած։ Թեքերը նեղ են լինում և բաւական երկար, ալսպէս որ մօտ 17 սանտիմետր կամ են ընկնում և վերջանում են եռանկիւնաձեն։ Այս թեկի կախ ընկած մէսի շուրջը կարած է լինում զար պալթա, եղյերին արծաթի, 4-5 սանտիմ. երկարութեան երեքական սիւր ման եր մինեանց մօտ եռանկիւնիներ են կայսում, միայն թենքի եռանկիւնաձեն մասում եռանկիւնիների գաղաթները գէպի ներս, խոկ միւս մասերում գէպի գուրա են ուղղուած։ Այս եռանկիւնիները կոչում են անիսո-եր։ Թեքի բացուածքի արմատին կարած են լինում վեց կոճակ արծաթի դրամներից։ Հարուսաներն արազիսի կոճակներ կարում են առելի շատ, մինչև արմտնկը խոկ ալստեղից, երբեմն էլ գեռ շատ բարձրից մի զալթանի վրայով կարած է լինում արծաթի պիւրմա—նշաձեն և նշաշափ սնամէջ արծաթ։

Այս տեսակ արխալուզը կոչում է թեքաւոր, որովհետեւ թեք արցէն կարուած, ամբացրած է, մինչգեռ պանագիր կոչուած արխալուզների թեքերի վերին մասը կարուած է լինում հասարակ կոտրից, և որանց վրալից, միայն հարկաւոր գէպքերում, անց են

կացնում սկսնամանները — նկարագրուած ձեռով կարուած առանձին թերեր, որ ուսերի մօտ երկու կոճակներով կապում են արխալուղին:

Արխալուղի վրալից, մէջքին կապում են գոտին, որ լինում է դարակի կառորից, 0,70 մետր լայնութեան, որ մի քանի ծալ են անում և 3—3¹/₂ մետր երկարութեան, որ փաթթաթում են մի քանի անգամ:

Արխալուղի կրծքի երկու կողմում, հարկաւոր դէպքերում կոճակներով ամբացնում են սեխան: — Աս բաղկացած է երկու շարանից, որոնցից իւրաքանչիւրը մի զալթանի վրայ շարած և լեռով մի նեղ չորի վրայ կարած 20—30 արծաթեալ քառնկոսքէկանոցներ և կամ հին դրամներ են:

Քիրք: — Արխալուղի վրալից, տօնական օրերին, միշտ, ամառ, ձմեռ, հազնում են քիւրք, որ Ղարաբաղից է մտել և միննոյն տարազով է կարւում: — Ուշի արխալուղի ձեր, միան թեքերը կարճ, մինչեւ արմուկներն են հասնում և ուզիղ են ձեստ, կարում են առանձլապէս կարմիր թաւիչից և շուրջը, ինչպէս և թեսերի ծալքերին և օձիքին, կարում չորս մատ լայնութեան ազուէսի մորթի:

ՀԱՆԴԵՐՁԱՅ: ԱՐԺԵՔԲԻ.

	Հիաւուր.	Գանաւուր.
Շապիկ.	բուր. 1 ₁₂₀ —2.	3 — 5 բ.
Շապկընկեր	0 ₁₂₀ —0 ₁₁₉ .	0 ₁₂₀ —0 ₁₁₉ .
Արխալուղ	3 — 3 ₁₂₀ .	4 — 6.
Գոտի	0 ₁₂₀ —1.	1 ₁₂₀ —2.
Հախա, սիւրմա և զիւրմա.	2	10 — 15.
Քիւրք	0	25 — 30.

Ընդամենը՝ 4₁₂₀—7₁₂₀. | 43₁₂₀—58₁₂₀

ՈՏՆԱՄՄԱՆ.

Առջորաբար բոլոր կանալք, հարսներն ու աղջիկները տարուալ մեծապէն մասը բոլիկ են ման գալիս: Եւ եթէ մինը հազնում է՝ ծազրում են, ասելով թէ կամենում է ցոլց տալ իւր հարստութիւնը: Երբ մի հեռու տեղ ուխտ են գնում, վերցնում են իրենց չորշկները, բայց ճանապարհին չեն հազնում, այլ միան ուխտատեղինեմ: Արապատճառը մասամբ էլ այն է, որ չմաշկով սաստիկ դժուար է քալել, ուրի հիւաննոցթիւններ անպակաս են սրանց մէջ: Ախան ձմեռը հազնում են կարճ գուլզա և չմոշէ (Տես նկար 2):

ԳԼՈՒՅԱՐՄԱՆՔ.

Նախ մազերը սանրում, երկուսի են բաժանում և առջեմ կախ ձգում: Ապա մի սպիտակ, քառակուսի կտոր, որ սովորաբար սպիտակ մանուզվարից է լինում և կոչում է տակալայտի՝ եռանկիւնաձև ծալում ձգում են զլիսին, անց կացնում թվի տակով և հանգուստում ծոծրակի մօտ: Ալսպիսի մի կամ երկու տակալաչակներ նորին կերպ միմենանց վրայ կապելուց ինտու սրանց վրալից, զագաթին դնում են պշին: Սրան պատրաստում են արտպէս: մի երկար, բայց համեմատաբար նեղ շորի վրայ խմոր են քսում և 2 առնախիմ: Հայութեամբ ծալում, ապա մի թափ վրոյ անց կացնելով՝ ծալը միացնում ու կարում: Յետոյ վերի եղրերը փոքր ինչ իւտ են բանում: Մեծութիւնը լինում է կրողի գագաթի համեմատ: Սրա վրալից մի մահուդպարի լաւակ են ձգում զլիսին, որ թվի տակով անց կացնելով՝ ծոծրակի մօտ հանգուստում են: Յետոյ մի ամբկատկապիու—կարմիր քառակուսի կտոր եռանկիւնաձև ծալուած—ձգում են զլիսին և ծածկելով ճակատի կէսը՝ ծալը ուղղակի ականջի վերելով տանում և ծոծրակի վրայ հանգուստում են: Ճակատկապիի վրայ կապում են պազմանո, (տես նկար 1), որ ժապաւէնի վրայ կարուած երրիմն քսան կուպէկանոց, երբմն էլ հին դրամներ են, մօտաւորապէս 20—30 հատ: Սրբմին սա երկար է լինում: Ղազմիր քուղերը (թեւերը) անց կացնելով՝ ծոծրակի վրալով՝ թերում են թվի տակ և ապա տանում ծոծրակի մօտ հանգուստում: Ալմմ սովորութիւն է եղել, որ երկուսի բաժանած ծամերը առանձին առանձին ուրում են և արտի վրալով տանում, զագմի քուղից (ծնօտի տակ) անց կացնում ու նորից բարձրացնում, ուրուում նորն մազի վրայ, որպէս զի ծամը աւելի հաստանար: Յետոյ գնում են կլոթակը: —մի եռանկիւնաձև ծալուած շորի մէջ, երկու տեղ, միմեանցից ծնօտի լայնութեան չափ նեռու գնում են բռւրգ, բամբակ կամ շորի կտորներ, յետոյ ուրուում և զնչի վրալով տանում ծոծրակի տակ կապում) որպէսզի երեսը քառանկիւնի ձև ստանալ: Ապա կապում են օզանաբանդուը (տես նկ. 3: Սա բաղկացած է երկու եռանկիւնաձև կտորներից, որ սովորաբար կանաչ զանառուզից և կամ կարմիր թաւիչից է լինում, որի երեք կողմերն էլ լալն ժապաւէն է լինում կարած, մէջն էլ թեւելով տակութած ու առտառած: Խրաքանչիւր եռանկիւնու ներքնազմի երկարութեամբ մի զալթանով շարած են լինում արծաթի թօփիր: Երկու եռանկիւնիների ներքնակները ժապաւէններով միացած են, զագաթնանկիւններից զալթանոներ են ձգած: Ալս շանաբանզը ալնպէս են ձգում, որ թօփիրը զալիս են ալտերի վրալով անցնող մազի համերի վրայ: Ժապաւէններից մընն ընկնում է զագաթին, միւսը:

ծնօտի տակ, իսկ երկու զալթանները կապւում են ծոծրակի վրար-
թեառ արդէն կապում են բիթկաց, հարսները՝ կարմիր, սպիտակ-
կամ կրանաչ, իսկ պառաւները՝ թռւիս կամ սև։ Սա քառանկիւնի
կտոր է, եռանկիւնաձև ծալուած, որ բերանի վրալով անց կացնելով՝
կապում են ծոծրակի մօտ, ալնպէս որ բերանը ծածկուած է լինուած։
Պառանները քիթկալի ներքին, եռանկիւնաձև մասը կրծքի վրալ-
րաց են թողնուած, իսկ հարսները փաթաթում են բիթի տակ։ Այս բո-
լորի վրալ ձգում են մի քառանկիւնի, եռանկիւնաձև ծալուած
մելլուզո—պոլու զլիսի եապուզ, որը բերում անց են կացնում ծնօ-
տի տակով և ապա կապում ծոծրակի մօտ։

Սրա վրալ արդէն ձգում են հարսները մի լարզան, տօնականը՝
կարմիր դարավից, իսկ սովորականը՝ մանրապութա կարմիր չթից։

Սա քառանկիւնի է, 2 մ. երկարութեան և $1\frac{1}{3}$ մ. լայնութեան,՝
որը մի ծալորով ձգում են զլիսին, իսկ միւս ծալորը հասնում է մինչև
մէջքը։ Օտար մարդու պատահնիս՝ չարզաթը քաշում են վայր և
երեսը նրանով ծածկում։ Ուժանք չարզաթի երկու, վերին և ներքին
ծոսրառը եղբերին ուղարկներ են շարում։ Սրեք կամ չորս տա-
րուակ հարսներն ու պառաւները զլիսին լազակ են ձգում։ Այ-
կարմիր, բաց առաւելապէս սպիտակ դռնից, կամ փաթուխսից և
կամ չմից մօտ 2 մետր երկարութեան կտոր է, փոքր ինչ եռան-
կիւնաձև ծալուած։

Դլիսներն ալսպէս փաթաթած պահում են ամբողջ օրերով, զի-
շեր և ցերեկ, և միայն շարաթը մի անգամ լետ են անում և զլիս-
ները լուսանում։ Ընդհանրապէս ալս զարդերը բաւական կեզտուս են։
Ոխում, ծիսից դրամները մեացած։ Շարաթը միայն մի անգամ լետ
անելու պատճառն ալն է, որ կապելը բաւական չարչարանք և ժա-
մանակ է խումը Բալց ալսպէս միշտ կապուած պահելու պատճառով։
Համերի մազերը թափուում են և շատ քչերը երկար մազեր ունին-
ցնուան ու բուկն մարտղապէս թումչում են։ Ականջների մօտ
վերքեր են զորանուում։

Տղամարդկանց հանգերձները նոյնն են՝ ինչ որ բոլոր զանգե-
զուրցիներինը.—մոխրագոյն շալից կարած յուխայ և վարտիք, իսկ
չուխալի տակ սև կտակից արխալուզ։
